Ավագ վանքի վրայով։ Գուցե գույժը լսելով՝ գրիչ Վարդան Կարնեցին շտապել է հայրենի Կարին գավառը, իսկ ձեռագիրը տարվել է Բաբերդ «եւ յայսմ ամի» պատրոն Աստուածատուրը ձերբակալվել է ամիրայի կողմից «և ի ձեռն այնմ գազանի»[79] կնքել իր մահկանացուն։

Բ. Սարգիսյանը, Տօնականի վենետիկյան թերթերի վրա գրված հիշատակագրությունը նկատի ունենալով, ուր ասված է «զՅովհաննէս Միջնաղբերացի, որ լի հավատով եւ հոգւով ձեռնտու եղև յաղագս սուրբ գրոյս... որ մեծաւ յուսով մասնակից եղև, սուրբ և բարեճաշակ բուրաստանիս, եւ փոխանակ երկրաւորիս ստացաւ զանճառելին», գրում է. «կերևի թե փրկանավորելեն վերջ գրված է սույն հիշատակագրությունը և թե Աստուածատուրի մահվանեն ետքը Հովհաննես քահանան ստացող եղած ըլլա մատենիս, եթե «ստացաւ զանճառելին» բացատրությամբ զայս ակնարկել ուզած է գրիչը»[80]։ Հովհաննես Միջնաղբերացին նույնպիսի ստացող էր, ինչպիսիք Տօնականի փրկագնման մասնակից մյուս, մի քանի տասնյակի հասնող անձնավորություններն են։ Հովհաննես Միջնաղբերացուն մի քանի անգամ են հիշատակում ձեռագրում, նույնիսկ Հիշատակարանում (603ա, 603բ), որովհետև ձեռագրի 4000 դրամ փրկագնից 1100-ը նա էր տվել։ Այդ պատճառով «գրեցաք երկրորդ պատարագ Յովաննիսի՝ հրամանաւ տէր Եսայեա, փիլիսոփայիցս և համաւրէն ուխտիս և զերապայծառ առաջնորդիս մերոյ Աբրահամու և սուրբ բեմբականաց Բ պատարագ անխաբան ամ-յամէ կատարել»[81]։ Տօնականի ստացողը, Աստուածատուրից հետո, Մշո Առաքելոց վանքն էր։

Ը

Այդ թվականից հետո անհայտ է նաև գրիչ Վարդանի ճակատագիրը։ «Հրատուտ և վարժ ամենայն արհեստի գրչության» Վարդան Կարնեցի գրչից մեզ հայտնի են մինչև 1200 թվականը օրինակած մի Տօնականի մասին տեղեկություն, այդ թվականին ավարտած Ավետարանը և վերջապես մեր Տօնականը։ Միայն վերջինս էլ բավական է, որ Վարդան գրիչը մնա որպես հայ գրչության արվեստի մեծ երախտավորներից մեկը, որպես մեզ հասած հայերեն ամենախոշոր ձեռագրի կերտողը։ Բայց փորձենք որոնումները։ Ստեփանոս գրիչը, որի ընդօրինակած Ավետարանի հիշատակարանը շատ նման է Վարդանի ընդօրինակության հիշատակարանին, և էջերով համընկնում են միմյանց, գրում է որ ինքն արտագրել է «յ(ը)նտիր եւ ի ստոյգ աւրինակէ ամենայն արհեստիւք լի եւ պատատուն, որ էր Կաւզմաի հռետորի»[82]։ Կոզմա հռետորը ԺԲ դարավերջի և ԺԳ դարասկզբի նշանավոր գրիչ և ծաղկող էր, որի ընդօրինակությունները համարվում էին ընտիր օրինակներ։ Ի միջի այլոց այսպիսի դեպքերում «հռետոր» բառը ոչ թե ճարտարախոս, ճառախոս է նշանակում, այլ ճարտարագիծ, գրչության նշանավոր վարպետ։ Կոզմա գրչից Մաշտոցյան Մատենադարանում պահվում է Խարբերդի Բարջանջ գյուղում 1219 թ. գրած և

79 Ցիշատակարանք, Ա, էջ 712։

80 Բ. Սարգիսյան. Ցուցակ, Վենետիկ, Բ, էջ 480։

81 Մատենադարան, ձեռ. № 7729, էջ 603բ։ Առաքելոց վանքի միաբաններից են նաև Աւետիս Ճրանցին և Երեմիան, որոնց հիշատակագրությունները «Ցիշատակարանք»-ի մեջ սխալմամբ գրված են որպես ձեռագրի գրչի և ստացողի ժամանակակիցների հիշատակագրություններ։

82 Մատենադարան, ձեռ. № 10359, էջ 307բ։